

## Ես հոս դրան մղա՞կ եմ... հեղինակ՝ Երուսանդ Կոպելեան

Շոգեկառքը վերջին կայանը հասաւ եւ հոն՝ սեւ վիշապի մը պէս փսխեց իր կուլ տուածները՝ դէպի ծովափ: Ժողովուրդը, ամրան կիզկիչ արեւուն տակ, բազմագոյն հեղեղի մը պէս հոսեցաւ սանդուխներէն վար. դէպի նաւամատոյց եւ *թունիք*ներու նախ կշռութաւոր, ապա անկանոն ձայներուն մէջ հալեցաւ ու կորսուեցաւ:

Միջոց մը, նոյն իրարանցումը շարունակուեցաւ նաեւ նաւամատոյցի սպասման սրահին մէջ, բայց քանի՛ ժողովուրդը աւելցաւ, շարժումը այնքան դանդաղեցաւ եւ եկաւ պահ մը, ուր ի վերջոյ բոլորն ալ գրեթէ անշարժացան՝ ամենափոքր շարժումն անգամ անկարելի դարձած ըլլալով այլեւս բոլորին:

Մարդ մը, կին մը, 1516 տարու աղջիկ մը եւ 810 տարու աղջնակ մը, ըստ երեւոյթին՝ ընտանիք մը, սրահին մէջ սկիզբները միւսներուն նման քանի մը անգամ տեղ փոխելէ վերջ, խճողումի հետեւանքով վերջապէս իրենք ալ անշարժացան եւ կինն ու աղջնակը նստարանի մը վրայ նստած, մարդն ու աղջիկը ոտքի, սկսան սպասել շոգենաւին, որ սակայն անբնականօրէն կ'ուշանար:

Մարդիկ, տակաւին զիրար մը հրմշտկէին, վերջին եկողները իրենց տեղ կարենալ բանալու համար կը սողոսկէին բազմութեան մէջ, ասոր անոր կը զարնուէին ու կը ջանային այդքան խճողումին մէջէն իսկ անցնելով մօտենալ նաւամատոյցի դրան, գէթ շոգենաւին մէջ նոյն բախտը ունենալէ խուսափելու համար: Ու մինչ շոգենաւը կ'ուշանար, *թունիք*ները կը գործէին տակաւին, յապաղած վերջին ճամբորդներն ալ ընդունելու համար՝ արդէն իսկ շարժուելու անկարող ներսի բազմութեան մէջ:

Մարդը անհամբերութեան նշաններ ցոյց կու տար, մերթ ժամացոյցին կը նայէր, մերթ պատուհանէն շոգենաւին գալիք ուղղութեան ու քրին տակէն բաներ մը կը մոլտար շարունակ անհասկնալի կերպով, ջղային շարժումներով:

— Ձեր ժամը քանի՞ն է, հարցուց ի վերջոյ կնոջը եւ մեծ աղջկան խիստ շեշտով մը, շոգենաւը ուշացաւ:

Կինը, չլսել ձեւացուց ու շարունակեց նայիլ աջ ու ձախ, կիներուն եւ երիտասարդ աղջիկներուն հագուստները դիտելով, արդուզարդը քննելով: Իսկ աղջիկը քրին տակէն բաներ մը ըսաւ, զոր թերեւս ինքն անգամ չհասկցաւ:

Մարդը կրկնեց հարցումը. աղջիկը այս անգամ բնաւ չպատասխանեց, մօրը պէս ըրաւ, գլուխը անդին դարձուց եւ սկսաւ դիտել նորեկները՝ մուտքին ուղղութեամբ: Մարդը, քթին տակէն դժգոհութեան նշաններ ցոյց տալով իր կարգին բաներ մը մոմոաց, յետոյ խօսքը պզտիկ աղջկան ուղղելով, անոր հարցուց, թէ իր ժամը քանի՞ն էր:

Աղջնակը ժամը ըսաւ: Մարդը ասոր վրայ կրկին նայեցաւ իր ժամացոյցին, ի նշան զարմացումի՝ շրթունքները փոթփոթեց եւ անգամ մը եւս նայեցաւ պատուհանէն դուրս՝ գէթ հեռուէն շոգենաւին գալը կարենալ տեսնելու յոյսով:

Տաք էր. խճողում ալ կար, օդ չէր բաներ, ամէն մարդ՝ յայտնի էր, որ անհանգիստ էր: Ոմանք, իրենց օրաթերթերով կը հովահարուէին ու կը զովանային, ուրիշներ այդքան շարժումին իսկ ազատութիւնը չունէին ու նեղութեամբ եւ ատելութեամբ կը նայէին իրենց քովիներուն, որոնք ակամայ կ'արգիլէին այդ շարժումը, իրենց կարգին՝ իրենք եւս նոյնը ընելով յաճախ:

— Ո՛ւշ մնացինք, ըսաւ մարդը՝ խօսքը նետելով օդին մէջ գրեթէ ոչ ոքի ուղղեալ: Տեսա՞ք եղած գործը հիմա:

Իրօք ալ, ոչ ոք պատասխանեց իր այս խօսքին, միայն քանի մը ճամբորդներ անգամ մը եւս իրենց ժամացոյցներուն նայեցան կամ իրենց գլուխը պատուհանին կողմը դարձուցին՝ շոգենաւը տեսնելու համար:

Չկար:

Կինը, նորեկներէն մէկը ցոյց տալով մեծ աղջկան բաներ մը ըսաւ: Աղջիկը չհասկցաւ, ծռեցաւ, մայրը խօսքը անգամ մը եւս կրկնեց անոր ականջին մեղմաձայն: Չարմանքի քմծիծաղ մը ուրուագծուեցաւ աղջկան դէմքին վրայ, մօրը երեսը նայեցաւ: Մայրը ակնարկներովը հաստատական նշան մը ըրաւ եւ աղջիկը խնդաց: Մարդը ատելութեամբ նայեցաւ իր կնոջ եւ աղջկան ու դարձեալ քթին տակէն բաներ մը մոլտաց:

— Ուշացաւ, ըսաւ կինը՝ խօսքը ուղղելով աղջկան:

Աղճիկը ժամացոյցին նայեցաւ, չպատասխանեց:

Մարդը գրպանէն ժամանակացոյց մը հանեց եւ երկարեց՝ ըսելով.

— Անգամ մը նայէ, տեսնենք քանի՞ն է:

Կինը, արհամարհանքով վերէն վար լուռ չափչփեց ամուսինը եւ առանց բան մը ըսելու՝ ժամանակացոյցը ետ տուաւ:

Մարդը բարկութեամբ առաւ զայն կնոջ ձեռքէն եւ այս անգամ երկարեց մեծ աղջկան:

— Ես ժամանակացոյցի նայիլ չեմ գիտեր, ըսաւ աղջիկը կարճ ու կտրուկ եւ ձեռքն իսկ չառաւ:

Մարդը քթին տակէն բաներ մըն ալ մոմոաց, յետոյ խօսքը կնոջը ուղղելով ըսաւ.

— Ափով դրամ կու տանք ու դպրոց կը դրկենք ահա եւ օրիորդը ժամանակացոյցի նայիլ մը անգամ չի գիտեր եղեր, կը տեսնե՞ս:

Կինը չպատասխանեց:

Աղջիկը՝ անտարբեր ակնարկ մը նետեց հօրը վրայ, գլուխը անդին դարձուց՝ անորոշ տեղ մը նայելով: Պզտիկը՝ քիչ մը եւս սեղմուեցաւ մօրը եւ սկսաւ անոր պայուսակին կափարիչովը խաղալ՝ բանալ գոցելով: Մայրը, նախ աղջկան ձեռքը անդին հրեց արգիլելու համար, բայց երբ տեսաւ որ տակաւին կը շարունակէ ան խաղալ, բարկութեամբ քաշեց պայուսակը եւ միւս կողմը առաւ: Պզտիկ աղջիկը պահ մը վշտացած նայեցաւ մօրը, յետոյ ակնարկները գետին խոնարհելով սկսաւ կօշիկներուն ծայրերը դիտել:

Բազմութեան մէջէն ձայն մը՝

— Եկա՛ւ, եկա՛ւ, ըսաւ:

Շարժում մը ծայր տուաւ, ժողովուրդը արկնոծեցաւ: Երիտասարդի մը բարձրաձայն եւ անպատկառ ծիծաղը լսուեցաւ սակայն շուտով եւ ընկերներունը միացաւ անոր:

Յուսախաբ, ճամբորդները իրենց տեղերը մնացին այս անհամ կատակէն դժգոհ:

— Իշու կատակ, ըսին աջէն ու ձախէն:

— Ահագին տղայ՝ չ'ամչնար, ըսին աւելի վերապահները:

Մարդը, բարձրաձայն մօրը ու կնկանը քֆրեց այդ կատակը ընողին:

Կինը՝ շապիկէն քաշեց մարդուն, մեծ աղջիկը՝ «հայրի՛կ, ամօթ է» ըսաւ, պզտիկը՝ մտահոգ ակնարկները վերցուց եւ հօրը աչքերուն մէջ նայեցաւ:

Մարդը քթին տակէն շարունակեց հայիտել՝ այս անգամ դէպի ծով՝ շոգենաւին գալիք ուղղութեամբ:

Կինը յանդիմանեց.

— Է՛յ, ըսաւ, հերիք տրտռաս, տունէն ելլելէդ ի վեր դէմդ եկողին կը հայհոյես: Ամօթ ըսուած բան մը կայ. չես նայիր՝ քովդ կին ունիս, աղջիկներ ունիս:

Մարդը լռեց: Բարկութեամբ սկսաւ աջն ու ձախը դիտել: Ակնարկները պահ մը կառչեցան պզտիկ աղջկան կոշիկներուն. նայեցաւ, նայեցաւ, պոռթկաց.

— Երկաթէ ըլլայ՝ նորէն կօշիկ չի դիմանար այս աղջկան: Կ'ուտէ՞, ի՞նչ կ'ընէ. չեմ հասկնար: Ե՞րբ էր առինք տակաւին. հալեր, լմնցեր է:

Կինը խիստ ակնարկով մը նայեցաւ աչքին մէջը, յետոյ սաստեց.

— Չիմա ասոր ոչ տեղն է, ոչ ալ ատենը: Դուն առանց խօսելու չե՞ս կրնար կենալ մարդ, կը ճաթի՞ս, ի՞նչ:

Մարդը կրկին լռեց. դարձեալ սկսաւ նայիլ պատուհանէն դուրս, շոգենաւին գալիք ուղղութեամբ:

— Ելէ՛ք, ըսաւ, ահա շոգենաւը կու գայ վերջապէս: Ելէ՛ք, մի՛ տնտնար:

Ուրիշներ ալ հաստատեցին ասիկա: Նստողներուն ըսին, որ կու գայ: Ժողովուրդը կրկին խոնուեցաւ, բոլորն ալ դէպի դուռ խուժեցին:

Շոգենաւը մօտեցաւ: Արդէն կիսով լեցուն էր, դռները բացուեցան, ճամբորդները զիրար հրելով հրմշտկելով ներս մտան: Մարդը քանի մը անգամ պոռաց կնոջը եւ աղջիկներուն, որ քիչ մըն ալ աճապարեն, կինը կրկին սաստեց.

— Մի՛ պոռար, ի՞նչ կայ, չե՞ս տեսներ, կը քալենք ահա, ըսաւ:

Մարդը անոնցմէ առաջ անցաւ, գնաց տեղ բռնեց անոնց համար, սպասեց որ գան: Նստած տեղէն ալ պոռաց.

— Շո՛ւտ ըրէք, շարժեցէ՛ք, հիմա տեղերը ձեռքէ պիտի երթան, ըսաւ:

Աղջիկը պատասխանեց, թէ կու գան ահա, պոռալիք ի՞նչ կայ հիմա:

Եկան, նստան՝ հանգստացան: Մարդը յոգնած՝ ոտքերը երկարեց դէպի դէմի նստարանը: Քանի մը անցորդներուն ոտքը ոտքերուն կառչեցաւ, ոմանք ներողութիւն խնդրեցին, ոմանք՝ բան մըն ալ չըսին. ան խիստ խիստ նայեցաւ բոլորին երեսն ի վեր կամ ետեւէն ու ամէնուն ալ բաներ մը մոլտաց: Սպասեակը եկաւ նախկին ճամբորդներէն մէկուն բերած թէյին գաւաթը առնելու, ան ալ մարդուն ոտքին կառչեցաւ, քիչ մնաց որ քթի բերնի վրայ իյնար, գաւաթ մաւաթ, ափսէ մափսէ մէկդի երթային, լեցուն գաւաթներուն մէջի թէյերը թափէին նստողներուն վրայ: Սպասեակը

ներողութիւն խնդրեց, ցաւ յայտնեց պատահածին համար: Մարդը, վերէն վար, ոտքէն մինչեւ գլուխը չափչփեց սպասեակը, քթին տակէն բաներ մը ըսաւ: Սպասեակը չլսել ու չտեսնել ձեւացուց եւ անցաւ գնաց:

Կինը ոտքովը զարկաւ մարդուն ոտքին.

— Քաշէ՛ սա ոտքերդ, կիրակի օրով փորձանք պիտի բանաս մեր գլխուն, քթէ բերնէ պիտի բերես պտոյտն ալ, բանն ալ, ըսաւ:

Մարդը ոտքերը քաշեց, սկսաւ շուրջը դիտել: Անդին, մանուկ մը, առանձին նստեր՝ իրենց կողմը կը նայէր: Քովը ծրարներ կային մեծ ու փոքր եւ գիւղական պայուսակ մը: Յայտնի էր որ կա՛մ նոր կու գար գաւառէն եւ կամ այցելութենէ կը վերադառնար անկէ: Յոգնած կ'երեւէր, հաւանաբար շոգեկառքի երկար ճամբորդութեան մը հետեւանքով, քիչ մըն ալ բաժանումին տուած յուզումէն: Անորոշ ակնարկներով շուրջը կը դիտէր, նայուածքները մերթ ընդ մերթ կանգ կ'առնէին տեղ մը, յետոյ ուրիշ տեղ մը կը փոխադրուէին աննպատակ:

Ընտանիքին հայրը, պահ մը ուշադրութեամբ քննեց մարդը՝ ակնարկները անոր վրայ սեւեռած: Յետոյ, յանկարծ, վեր խոյացաւ տեղէն, գնաց կառչեցաւ շուարած մարդուն օձիքին ու սկսաւ կաշկանդել զայն՝ հայիոյելով ու պոռալով.

— Ծօ՛ արջ, Աստուծոյ արջը, դուն ինքզինքդ ո՞ւր կարծեցիր, լերան գլո՞ւխը, հա՞, ըսէ՛, լերան գլո՞ւխն ես ծօ, լերան գլուխը անգամ ատանկ չեն նայիր կնոջ ու աղջկան՝ էրիկմարդուն քովը: Մենք ի՞նչ ենք հոս, դրան մղլա՞կ ենք, ըսէ անամօ՛թ, ըսէ՛ անպատկառ...

Մարդուկը, զարմացած ու շուարուն, բերանաբաց, բան մը չէր ըսեր, անորոշ վանկեր կը կակազեր միայն ու ցնցուելով դիմացինինն երես կը նայէր՝ լալու պէս: Միւսը փրփրած, լեզուին կու տար շարունակ, կը հայիոյէր, կ'անարգէր, օձիքէն կառչած՝ կը ցրցտներ անխնայ, մոլորվորոյն ալ զարմանահար կը դիտէր:

Վրայ հասաւ կինը, բռնեց ամուսնին շապիկէն ,քաշեց, քաշկոտեց, բերաւ զայն տեղը նստեցուց.

Ի՞նչ կ'ուզես խեղճ մարդուկէն, սաստեց, դուն խենթացե՞լ ես այսօր, ի՞նչ ես եղել:

Գաւառացին, տակաւին շփոթանքը վրան, սկսաւ իր տարտղնուած իրեղենները հաւաքել ու վրան գլուխը շտկել, մինչ անգին, դողահար, աղջիկները իրենց հայրը կը ջանային հանդարտեցնել: Մարդը լեզուին տուած՝ կը պոռար.

— Դուն մեզ ի՞նչ կարծեցիր, ծօ ա՛րջ՝ ատիկա՛ քու մայրդ է: քու քոյրդ, հասկացա՞ր: Աստուծոյ արջը:

Միւս ճամբորդները, երբ տեսան որ ամէն վայրկեան կրնար նոր բան մը պատահիլ, գաւառացիին ըսին, որ գոյքերը հաւաքէ եւ ուրիշ տեղ մը երթայ նստի: Մարդուկն ալ շուարած ու յուզուած, մտիկ ըրաւ, հաւաքեց ծրարներն ու տոպրակները, ելաւ գնաց ո՛վ գիտէ ուր նստելու, ա՛լ զինքը չտեսանք:

Աղջիկներուն հայրը կը շարունակէր տակաւին տրտնջալ, մինչեւ որ կինը միջամտեց.

— Հերի՛ք է, խայտառակ ըրիր մեզ այսքան հոգիին առջեւ, ըսաւ:

— Թող գիտնա՛յ, ըսաւ մարդը վերջին պատասխան մը ըլլալով. թող գիտնայ, որ մենք ալ երիկմարդ ենք, դրան մղլակ չենք: Ամէն թռչունի միս չ՛ուտուիր. ահա այդպէս կ՛ընեն ես մարդը. թող երթայ ու սորվի:

Կինը խիստ շեշտով մը կրկին սաստեց.

— Հիմա ե՛ս պիտի պոռամ եւ ամէն մարդ այն ատեն պիտի գիտնայ, թէ դուն ի՞նչ ես, ըսաւ: Հերի՛ք է, հերի՛ք. ի՞նչ կ՛ուզէիր խեղճէն, ի՞նչ ըրաւ մարդուկը քեզի, բա՛ն մըն ալ չըրաւ:

Մարդը փորձեց պատասխանել, կինը սաստեց, ոտքը զարկաւ ոտքին, «լռէ՛» ըսաւ ակռաներուն արանքէն: Ա՛լ չխօսեցաւ, պատուհանէն սկսաւ ծովը դիտել:

Մէր Տունը  
07.08.1967